ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

N 05/17.1/19220-18

«28» 11 2018թ.

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի ղեկավար
պարոն Է. ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աղաջանյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի պաշտոնակատարի 2018 թվականի նոյեմբերի 19-ի 1534-Ա որոշման 3-րդ կետի՝ ներկայացնում եմ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար Հակոբ Արշակյանի՝ 2019թ. նոյեմբերի 21-23-ը քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման վերաբերյալ հաշվետվությունը:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքով՝

11/27/18

X

Bagrat Badalyan

Պաշտոնակատար /Հ.ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կատ. ԱԿԾՎ՝
Վիոլետա Աղաջանյան/10 590093

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակության գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Հակոբ Արշակյան

Վիոլետա Աղաջանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության Արտաքին կապերի և ծրագրերի վարչության պետի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2018 թվականի նոյեմբերի 21-23-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

ՌԴ տրանսպորտի նախարարություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

Մասնակցություն «Տրանսպորտային շաբաթ–2018» ամենամյա միջոցառմանը

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2018թ. նոյեմբերի 20–23-ը ք. Մոսկվայում կայացել է «Տրանսպորտային շաբաթ–2018» ամենամյա միջոցառումը, որն անցկացվել է Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարության բարձր հովանու ներքո:

Վերոնշյալ միջոցառման ընթացքում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, որոնց մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակությունը:

ԵԱՏՄ-ի շրջանակներում կայացել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների գործնական նախաճաշը, որի ընթացքում քննարկվել է 2018 թվականի ճանապարհային քարտեզի իրականացման ընթացքը և սահմանվել են կարճաժամկետ հեռանկարների խնդիրները: ԵԱՏՀ տրանսպորտի և ենթակառուցվածքի նախարար Էմիլ Կայկիևի կողմից հայտարարվել է, որ ստեղծվել է ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհուրդ, խոսվել է դրա գործունեության մասին:

«Տրանսպորտային շաբաթ–2018» միջոցառման կարևորագույն հանդիպումներից էր նաև ԱՊՀ մասնակից պետությունների Տրանսպորտային համակարգող խորհրդակցության (ԱՊՀ ՏՀՏ) 38-րդ նիստը: Նիստի աշխատանքի ընթացքում քննարկվել է 2017-2019 թթ. ժամանակահատվածի համար նախատեսված միջազգային հաղորդակցությունում փոխադրումների իրականացման ընթացքում ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում տրանսպորտային անվտանգության ապահովության ռազմավարության իրականացման առաջնահերթ միջոցառումների ծրագիրը, տրանսպորտային համալիրի թվային հարթակի ստեղծման միջոցառումների իրականացումը, 2020թ. ժամանակահատվածի համար տրանսպորտի ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության առաջնահերթ ուղղությունների արդիականացումը, ինչպես նաև ներկայացվել է ԱՊՀ ՏՀՏ Գործադիր կոմիտեի 2018 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունը:

ԱՊՀ մասնակից պետությունների Տրանսպորտային համակարգող խորհրդակցության 38-րդ նիստի ընթացքում տեղի ունեցան խորհրդակցության նախագահի տեղակալների ընտրությունները, որտեղ առաջադրված էին Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար Հակոբ Արշակյանի և Տաջիկստանի Հանրապետության տրանսպորտի նախարար Շեռալի Գանջալզոդայի

թեկնածությունները: Վերջինիս ընտրությունը չհաստատվեց, քանի որ նրա կողմից ԱՊՀ ՏՀՏ-ին քարտուղարությանը համաձայնություն չի ներկայացվել:

Կայացել է նաև ԵԱՏՄ-ի շրջանակներում ստորագրմանը նախապատրաստվող «Նավագնացության մասին» Համաձայնագրի տեքստի վերջնական համաձայնեցումը և նախաստորագրումը, որն իրականացրել է ՀՀ պատվիրակության անդամ ՀՀ տրանսպորտի նախարարության արտաքին կապերի և ծրագրերի վարչության պետի տեղակալ Վիոլետա Աղաջանյանը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատարի գլխավորած պատվիրակության Մոսկվա այցի ընթացքում տեղի է ունեցել երկկողմ հանդիպում ՌԴ տրանսպորտի նախարարության պատվիրակության հետ, որի աշխատանքին հայկական կողմից նաև մասնակցել է ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տողանյանը, իսկ ռուսական կողմից՝ «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի նահագահի տեղակալ Ալեքսանդր Միշարինը:

Հանդիպման ընթացքում Հ.Արշակյանի կողմից ներկայացվել են հիմնականում Հայաստանի և Ռուսաստանի միջև միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների իրականացման հետ կապված հարցերը. խոսվել է միջազգային կանոնավոր ավտոմոբիլային փոխադրումների իրականացման նպատակով ռուսական կողմից հայկական կողմին պարիտետի տրամադրման մասին, երրորդ երկրներից/երրորդ երկրներ Հայաստանի տարածքով դեպի Ռուսաստանի Դաշնություն ավտոմոբիլային բեռնափոխադրումների իրականացման համար թույլտվությունների քանակի ավելացման (1500 հատ) մասին, ինչը պայմանավորված է Իրանի Իսլամական Հանրապետությունից դեպի Ռուսաստանի Դաշնություն բեռնափոխադրումների մեծ պահանջարկով:

Ռուսական կողմն իր պատրաստակամությունն է հայտնել նշյալ հարցերը ավելի մանրամասն քննարկել Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության հարցերով հայ-ռուսական խառը հանձնաժողովի նիստի ընթացքում:

Քննարկվող թեմաների շրջանակներում անդրադարձ եղավ Վերին Լարս անցակետում տիրող իրավիճակին: Ռուսական կողմը հայտնեց, որ ներկայումս իրենց կողմից մշակվում է ազգային առաջնահերթ ծրագիր «Միջազգային համագործակցություն և արտահանում», որով 2019–2021 թթ. համար նախատեսվում է Վերին Լարսի վերանորոգումը: Ս.թ. հոկտեմբերին ՌԴ տրանսպորտի նախարարության և «Росгранстрой» պետական դաշնային ունիտար

ձեռնարկության ներկայացուցիչների իրականացվեց անցակետի համատեղ փորձագիտական զննում՝ վերջինիս վերանորոգման նպատակով պետական վերահսկողական մարմինների առաջարկները մշակելու համար:

Եվգենի Դիտրիխի կողմից հնչեցվեցին երկու հարցեր՝ կապված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում Ազգային անվտանգության ծառայության կողմից հայտնաբերված չարաշահումների և իրականացված խուզարկությունների, ինչպես նաև ՀՀ տարածքում ճանապարհների Պլատոն վճարման համակարգի ներդրման հետ:

Ալեքսանդր Միշարինը իր խորը մտահոգությունը հայտնեց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի շուրջ ստեղծված իրավիճակի առնչությամբ:

Նախարարի պաշտոնակատար Հ.Արշակյանը ռուսական կողմին հաղորդեց, որ ներկայումս 3 հոդվածներով քրեական գործ է հարուցված ու դեռ պարզ չէ ինչպիսին կլինի արդյունքը, սակայն նա իր կողմից հավաստիացրեց, որ հայկական կողմը գնահատում է ռուսական կողմից տաս տարվա ընթացքում կատարած բոլոր աշխատանքներն ու իրականացրած ներդրումները՝ ընգծելով շարժակազմերի կատարած թարմացումը, ինչպես նաև ՌԴ դաշնային սակագնային ծառայության կողմից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին 2019 թվականի համար տրամադրած 50 տոկոս զեղչը՝ Պորտ Կովկաս–Փոթի երթուղով բեռնափոխադրումների իրականացման նպատակով:

Խոսելով Երևան-Գյումրի-Երևան երթուղում գործող էլեկտրագնացքի մասին, Հակոբ Արշակյանը առաջարկեց նմանատիպ երթուղի կազմակերպել Երևան-Սևան-Երևան ուղղությամբ՝ հաշվի առնելով, որ ներկայումս ՀՀ կառավարության ծրագրերի շրջանակներում է Սևան ազգային պարկի զարգացումը՝ որպես տուրիստական ուղղություն: Նախարարի պաշտոնակատարի մտահաղացումը ողջունվեց Եվգենի Դիտրիխի և Ալեքսանդր Միշարինի կողմից և նրանք հայտնեցին իրենց պատրաստակամությունը նշյալ առաջարկը կյանքի կոչելու հարցում:

Հանդիպման ավարտին անդրարձ եղավ և մեկ անգամ ևս ողջունվեց երկու երկրների միջև ստորագրած «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության հարցերով միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» Համաձայնագրին: ՌԴ տրանսպորտի նախարար Եվգենի Դիտրիխը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար Հակոբ Արշակյանին խնդրեց աջակցություն ցուցաբերել նշյալ համաձայնագրի վավերացման ընթացակարգը արագացնելու հարցում:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Որոշվեց ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի առաջին նիստը անցկացնել 2019 թվականի առաջին կիսամյակում:

ԱՊՀ ՏՀՏ 38-րդ նիստի ընթացքում կայացած ընտրությունների արդյունքում Հակոբ Արշակյանը միաձայն ընտրվեց նախագահի տեղակալի պաշտոնում՝ 5 տարի պաշտոնավարման ժամկետով: Որոշվեց նաև ԱՊՀ ՏՀՏ Գործադիր կոմիտեի հաջորդ հերթական մասնաճյուղային նիստը անցկացնել Երևանում՝ 2019 թվականի մայիսի վերջում, ինչը սիրով ընդունվեց Հակոբ Արշակյանի կողմից:

«Տրանսպորտային շաբաթ–2018» միջոցառման շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար Հակոբ Արշակյանի և ՌԴ տրանսպորտի նախարարի Եվգենի Դիտրիխի կողմից ստորագրվեց «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության հարցերով միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» Համաձայնագիրը: Հետագայում Համաձայնագրին միանալու են Ղազախստանը, Ղրղզստանը, Բելառուսը, այն նաև բաց է լինելու այլ երկրների համար:

«Նավագնացության մասին» Համաձայնագրի վերջնական համաձայնեցման և նախաստորագրման արդյունքում Համաձայնագրի ստորագրումը որոշվեց տեղափոխել ս.թ. դեկտեմբերի 9-ին Սանկտ-Պետերբուրգում կայանալիք ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում:

Հակոբ Արշակյանի և Եվգենի Դիտրիխի երկկողմ հանդիպման արդյունքում Կողմերը պայմանավորվեցին առաջիկա ժամանակահատվածում կազմակերպել Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության հարցերով հայ-ռուսական խառը հանձնաժողովի նիստ, ինչպես նաև յուրաքանչյուր կողմից նշանակել կոնտակտային անձ՝ կազմակերպչական և ընթացիկ աշխատանքները պատշաճ իրականացնելու նպատակով:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար՝

Հակոբ Արշակյան

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@mtcit.am

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@mtcit.am